



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 10 Օգոստոս, 2026

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմասպուրութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմասպուրութիւն զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

Մեծ ու զարմանալի էս Քո գործերը, Ամենակալ Տէր Աստուած մեր,
Արդար ու ճշմարիտ էս ճամբաներդ, Ամենակալ Տէր Աստուած մեր:
Տէ՛ր, ո՛վ չի վախենում Քեզնից, Ո՛վ է, որ չի փառաւորում Քեզ,
Քանի որ Դու ես միայն սուրբ, (2); Միայն սուրբ: (3)

ԱՊՈԹՔ

Տէ՛ր Աստուած մեր, մենք կը գոհանանք Քեզմէ եւ կը փառաբանենք Քու սուրբ անունդ: Շնորհակալ ենք Քու մեծագործութիւններուդ, ողորմութեանդ ու հաւատարմութեան համար, որ ցոյց կու տաս սերունդէ սերունդ: Ինչպէս Քու ժողովուրդդ անցաւ փորձութիւններու, նեղութիւններու եւ անորոշութեան մէջ, բայց դուն երբեք չլքեցիր զիրենք: Դուն առաջնորդեցիր, պահպանեցիր եւ Քու խոստումներդ հաստատ պահեցիր: Սորվեցո՛ւր մեզի՝ երբ կեանքը դժուար է, չմոռնալ Քու կատարած գործերդ: Երբ մեր աչքերուն առջեւ նանապարհը փակ թուի, օգնէ՛ մեզի վստահիլ Քու առաջնորդութեանդ: Երբ մեր սիրտը վախով լեցուի, յիշեցո՛ւր մեզի, որ Դուն հաւատարիմ ես: Տէ՛ր, պահէ՛ մեզ Քու խօսքիդ մէջ: Տուր մեզի սիրտ, որ կը փնտռէ Քեզ, միտք, որ կը յիշէ Քու օրհնութիւններդ, եւ հոգի, որ ամէն օր Քեզ կը փառաբանէ: Օրհնէ՛ մեր ընտանիքները, մեր գաւազններն ու գալիք սերունդները, որպէսզի անոնք եւս նանչնան Քու անունդ, յիշեն Քու սփանչելի գործերդ եւ իրենց կեանքը Քու կամքիդ համաձայն ապրին: Տէ՛ր, օգնէ՛ մեզի ոչ միայն յիշել Քու գործերդ, այլեւ մեր կեանքով վկայել Քու բարութեան մասին: Թող մեր բերանները պատմեն Քու մեծութիւնը, իսկ մեր սրտերը միշտ վստահին Քեզի: Քեզի փառք, պատիւ եւ գոհութիւն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՄ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայրնեցաւ փասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւր ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցեղոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղեղոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պոռոթիւն յայտնեցէ՛ք Տիրոջ, բարձր հնչեցուցէ՛ք անոր անունը.
 բոլոր ժողովուրդներուն մանչցուցէ՛ք անոր մեծամեծ գործերը:
 երգեցէ՛ք անոր, ներբող երգեցէ՛ք անոր,
 պատմեցէ՛ք անոր սփանչելի գործերը բոլոր:
 Հպարտացէ՛ք անոր սուրբ անունով.
 Տէրը պաշտողներուն սիրտերը թող ուրախանան:
 Տիրոջ դիմեցէ՛ք եւ իրմով զօրացէ՛ք, պաշտեցէ՛ք զայն տեւաբար:
 Յիշեցէ՛ք անոր սփանչելի գործերը, հրաշքները եւ արձակած վնիւնները,
 դու՛ք՝ զաւակներդ Յակոբի, եւ ընտրեալները Տիրոջ,
 դու՛ք՝ ով սերունդ Աբրահամի, Տիրոջ ծառային:
 Անիկա Տէրն է, մեր Աստուածը,
 սակայն անոր վնիւնները ամբողջ աշխարհին համար են:
 Անիկա իր ուխտը միտէ՛ն չի հաներ բնաւ,
 իր խոստումը գալի՛ք բոլոր սերունդներուն համար է:
 Զի մոռնար այն ուխտը, որ կնքեց Աբրահամին հետ,
 այն ինչ որ երդումով Իսահակին խոստացաւ,
 եւ նոյնը՝ կանոնի պէս՝ կրկնեց Յակոբին,
 իբրեւ յաւիտեանական ուխտ՝ իր ժողովուրդին:
 "Քանաանի երկիրը քեզի պիտի տամ,- ըսաւ,-
 իբրեւ ձեզի վիճակուած ժառանգութիւն":
 Այսպէս խոստացաւ՝ երբ տակաւին թիւով այնքան քիչ էին,
 այս երկրին մէջ ապրող բոլո՛ւ մը պանդուխտներ,
 որոնք երկրէ-երկիր, մէկ թագաւորութենէ միւսը կ'երթային:
 Տէրը թոյլ չտուաւ որ ոեւէ մէկը վնաս հասցնէ անոնց.
 զանոնք պաշտպանելու համար թագաւորներու սպառնաց.-
 "Զղաչի՛ք իմ ընտրեալներուս, չարիք չհասցնէ՛ք մարգարէներուս":
 Տէրը սով բերաւ անոնց երկրին վրայ, ուտելիքի ամէն պաշար սպառեց:
 Բայց Յակոբի սերունդները փրկելու համար
 անոնցմէ առաջ եգիպտոս դրկեց Յովսէփը,
 որ իբրեւ ստրուկ վաճառուեցաւ:
 Անոր ոտքերը շղթաներով նեղեցին,
 անոր վիզին երկաթէ օղակ անցուցին,
 մինչեւ իր խօսքը իրականացաւ,
 Տիրոջ խօսքը եկաւ անոր ըսածը հաստատեց:
 Թագաւորը մարդ դրկեց եւ զայն արձակել տուաւ,
 ժողովուրդներու տիրակալը զայն բանտէն հանել տուաւ,
 զայն տէր կարգեց իր պալատին,
 իշխան կարգեց իր բոլոր ստացուածքներուն վրայ.
 զայն իր իշխաններուն վրայ իրեն փոխանորդ կարգեց,
 իր խորհրդականներուն իմաստութիւն ուսուցանելու
 հեղինակութիւն տուաւ անոր:

ԱՐԴԱՐՆԵՐՈՒ ԵՐԱՆՈՒԹԻՒՆԸ - Մաս Ա

Սաղմոս 105. պարմութեան վերաքաղում, բայց ոչ պարզապէս պարմութիւն մը վերյիշելու, այլ՝ այդ դէպքը վերստին ապրելու եւ ապրեցնելու մեր ամենօրեայ կեանքին մէջ: Այնպէս ինչպէս Ս. Ծննդեան կամ Ս. Յարութեան փօներուն առթիւ երբ հետեւեալ շարականները կ'երգուին, “Այսօր փօն է Ս. Ծննդեան”, “Այսօր յարեաւ ի մեռելոց”: Այդ “Այսօր” արքայայտութիւնը իր մէջ ունի այնպիսի խորունկ իմաստ մը, որ-պէսզի հաւարացեալը ապրի նոյն այդ դէպքին խորհուրդով եւ ակնկալութեամբ ու սպասումով: Ահա նոյն մտքով եւս Սաղմոս 105 մեզի կը ներկայացնէ այդպիսի օրինակ մը, վերյիշեցնելու եւ վերապարմելու այդ դէպքը որ պարահեցաւ Աբրահամի օրերէն սկսեալ մինչեւ իսրայէլացիներուն ելքը Եգիպտոսէն ու անոնց անապարային թափառումները: Այն նոյն առիթով Աստուած նոյն թելադրութիւնը ըրած էր, ըսելով, “Գալիք սերունդին ականջին խօսիր այդ բոլորի մասին, վկայելով Աստուծոյ զօրութեան ու Անոր կարարած գործերուն մասին”: 104 Սաղմոսին պէս, այս Սաղմոսը եւս կը սկսի կոչով մը, “Գոհութիւն յայրնեցէք”, շնորհա-կալութիւն յայրնեցէք Տիրով, ու Անոր անունը բարձր, այսինքն լսելի, բարձրաձայն հնչեցուցէք, ու բոլոր ժողովուրդներուն ճանչցուցէք Անոր կարարած մեծամեծ գործերը, այսինքն՝ վկայեց այդ բոլորի մասին: Երգեցէք Անոր եւ պարմեցէք Անոր սքանչելի գործերու մասին: Մանաւանդ՝ հպարտացէք, մի ամչնաք, Անոր սուրբ անունով: Առաւել եւս, Տէրը պաշտողները թող ուրախանան: Նեղութեան կամ դժուարութեան մէջ էք, դիմեցէք Տիրոջ, եւ Իրմով զօրացէք, եւ Անոր ծառայութիւն ըրէք միշտ: Յիշեցէք, Անոր սքանչելի գործերը, հրաշքները եւ վճիռները: Ովքեր ասոնք, որ այս բաները ընեն, Յակոբի զաւակները, Տիրոջ ընտր-եալները, Աբրահամի սերունդ, որ Տիրոջ ծառան է: Աստուած մեր Աստուածն է, բայց Անոր վճիռները աշխարհին համար են: Կը յիշէ այն ուխտին մասին, որ Աստուած երբեք մտքէն չէ հանած ու չի հաներ: Անգամ մը որ խոստացաւ ուրեմն կը կատարէ այդ խոստումը: Այդ ուխտը կնքեց Աբրահամին հետ, երդումով Իսահակին խոստացաւ, նոյնը կրկնեց Յակոբին, իբրեւ յաւիտենական ուխտ եւ ոչ ժամանակաւոր: Յաճախ ուխտերը, մանաւանդ՝ մարդոց կողմէ կնքուած ժամանակաւոր են, իսկ Աստուծոյ կնքած ուխտը յաւիտե-նական: Այդ ուխտը երկրի մը ժառանգութիւնն էր: Քանաանի երկիրը: Նախքան այդ ժառանգութիւնը, պանդուխտ էին, փեղէ փեղ: Սակայն Աստուած պաշտպանեց իր ժողովուրդին: Տէրը սովի մարմնեց երկիրը, բայց Յակոբի սերունդը փրկելու համար անոնցմէ առաջ Եգիպտոս դրկեց Յովսէփը, որ իբրեւ սպրուկ վաճառուեցաւ: Ասիկա նախապարկերացումն էր Քրիստոսի եւ եկեղեցիին: Քրիստոս ալ նոյնպէս ծախուեցաւ, չարչարուեցաւ: Այնպէս ինչպէս Յովսէփին հեղինակութիւն փրուեցաւ ուսուցանելու, նոյնպէս ալ Եկեղեցիին իմաստութիւն փրուեցաւ Աւետարանի ճամբով ուսուցանելու հեթանոս աշխարհին:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: